# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**09 սեպտեմբերի 2025 թվական, N 137-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-022-0245-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.21371 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, 77-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածներով, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերով, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերով, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, N 18072024-06-0027 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Աքորի գյուղի կադաստրային քարտեզի 06-022-0245-0020 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի, 0.21371 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել ժամանակավոր օգտագործման մրցութային կարգով:

   Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 6400 (վեց հազար չորս հարյուր) դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝
   1) Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):
   2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:
   3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 3. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 4. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 9. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 10. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 11. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 12. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 13. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 15. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 16. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., սեպտեմբերի 09,
Լոռու մարզ, ք. Ալավերդի